**ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ № 1**
**№ ԳՀԱՊՁԲ-20-10/5-6 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ**

**ք. Երևան** **13.03.2020թ.**

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի պետ Ն. Յոլյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև «Գնորդ», մի կողմից և «Սեդարա» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Լ. Հովհաննիսյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, այսուհետև՝ «Վաճառող», երկուսը միասին՝ Կողմեր, հիմք ընդունելով **17.12.2019թ.** կնքված **№ ԳՀԱՊՁԲ-20-10/5-6** գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.15 կետը՝ փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

**1. Համաձայնագրի առարկան**

1.1 Կողմերը, հիմք ընդունելով համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու փաստը, փոխադարձ համաձայնությամբ որոշեցին կնքել սույն Համաձայնագիրը՝ սահմանելով Ապրանքների գնման և վճարման ժամանակացույցեր՝ համաձայն Հավելված № 1-ի և 2-ի:

1.2 Վաճառողը պարտավորվում է սույն Համաձայնագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին(այսուհետև՝ Ստացող) մատակարարել՝ Պայմանագրի տեխնիկական բնութագրերով նախատեսված ապրանքներ (այսուհետև՝ Ապրանք)՝ համաձայն № 1 Հավելվածով սահմանված գնման ժամանակացույցի, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար՝ վճարման ժամանակացույցով՝ հավելված N 2-ով, նախատեսված ժամանակահատվածում:

**2. Գինը և վճարման կարգը**

2.1 Սույն Համաձայնագրի ընդհանուր գինը կազմում է **7,434,600 (յոթ միլիոն չորս հարյուր երեսունչորս հազար վեց հարյուր) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն**, որը ներառում է Համաձայնագրի կատարումն ապահովելու նպատակով կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ նաև հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

2.2 Գնորդն իրեն հանձնած Ապրանքի դիմաց վճարումը կատարում է Պայմանագրի **3.3** կետով նախատեսված կարգով, 15 բանկային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան **10.12.2020թ.**:

**3. Այլ պայմաններ**

3.1 Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

3.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքները և պարտականությունները, Ապրանքի մատակարարման, հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

3.3 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3.4 Սույն Համաձայնագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն Համաձայնագրի անբաժանելի մասը:

3.5 Սույն Համաձայնագիրը կազմված է 3 էջից, հայերենով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն համաձայնագրի N 1 և 2 Հավելվածները հանդիսանում են սույն Համաձայնագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3.6 Սույն Համաձայնագրով նախատեսված՝ Գնորդի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում **ՀՀ ՊՆ ԿՇ և ԱԲ վարչությունը:**

**4. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| ՀՀ պաշտպանության նախարարություն | «Սեդարա» ՍՊԸ |
| ՀՀ, ք. Երևան, Բագրևանդի 5 | ՀՀ, ք. Երևան, Ալեք Մանուկյան 23/1 |
| ՀՀ ՖՆ գործառնական վարչություն | «Ինեկոբանկ» ՓԲԸ |
| Հ/Հ 900011144079 | Հ/Հ 2050022323331001 |
| ՀՎՀՀ 02522157 | ՀՎՀՀ 01527436 |
| ՀՀ ՊՆ ՆՏԱ Դեպարտամենտի պետ | տնօրեն |
| Ն. ՅՈԼՅԱՆ | Լ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ |

Հավելված N 1
N ԳՀԱՊՁԲ-20-10/5-6 պայմանագրին կից
N 1 Համաձայնագրի

## ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| Հ/հ | Ապրանքի անվանում | Չ/Մ | Քանակ | Միավորի գինը /ՀՀ դրամ/ | Ընդհանուր գումար /ՀՀ դրամ/ | Մատակարարումը՝ 2020թ |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | 2-րդ եռամսյակ |
| 17. | Էլեկտրական լար ԱՊՊՎ - 2x2.5 մմ² | մետր | 40,000 | 38.4 | 1,536,000 | 40,000 |
| 18. | Էլեկտրական լար ԱՊՎ - 1x6 մմ² | մետր | 8,000 | 38.4 | 307,200 | 8,000 |
| 19. | Էլեկտրական լար ԱՊՎ - 1x10 մմ² | մետր | 5,000 | 56.4 | 282,000 | 5,000 |
| 20. | Էլեկտրական լար ԱՊՎ - 1x16 մմ² | մետր | 10,000 | 84 | 840,000 | 10,000 |
| 21. | էլեկտրական լար՝ պղնձյա, բազմաջիղ, ՊՊՎ, 2x4.0 մմ² | մետր | 2,000 | 300 | 600,000 | 2,000 |
| 22. | էլեկտրական լար՝ պղնձյա, բազմաջիղ, ՊՊՎ, 2x2.5 մմ² | մետր | 5,000 | 198 | 990,000 | 5,000 |
| 23. | Էլեկտրական մալուխ ԱՎՎԳ - 2x6 մմ² | մետր | 5,000 | 120 | 600,000 | 5,000 |
| 24. | Էլեկտրական մալուխ ԱՎՎԳ - 4x6 մմ² | մետր | 2,000 | 227.7 | 455,400 | 2,000 |
| 25. | Էլեկտրական մալուխ ԱՎՎԳ - 4x10 մմ² | մետր | 2,000 | 372 | 744,000 | 2,000 |
| 26. | մալուխ ABBГ ալումինե 4x16մմ2 (Էլեկտրական մալուխ ԱՎՎԳ - 4x16 մմ²) | մետր | 2,000 | 540 | 1,080,000 | 2,000 |

**Գնորդ**
ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ ՊՆ ՆՏԱ Դեպարտամենտի պետ
Ն. ՅՈՒԶՅԱՆ

**Վաճառող**
«ՍԵԴԱՐԱ» ՍՊԸ
տնօրեն
Լ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Հավելված N 2
N ԳՀԱՊՁԲ-20-10/5-6 պայմանագրին կից
N 1 Համաձայնագրի

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Հ/հ | Ապրանքի անվանում | CPV կոդ | Ընդհանուր գին/դրամ/ | Վճարումը նախատեսվում է իրականացնել 2020թ., համապատասխան ամիսների, այդ թվում՝ | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | Ապրիլ | Մայիս | Հունիս | Հուլիս | Օգոստոս | Սեպտեմբեր | Հոկտեմբեր | Նոյեմբեր | Դեկտեմբեր, բայց ոչ ուշ, քան 10.12.2020թ. |
| 17. | Էլեկտրական լար ԱՊՎ - 2x2.5 մմ² | 31321260/503 | 1,536,000 | 1,536,000 | 1,536,000 | 1,536,000 | 1,536,000 | 1,536,000 | 1,536,000 | 1,536,000 | 1,536,000 | 1,536,000 |
| 18. | Էլեկտրական լար ԱՊՎ - 1x6 մմ² | 31321270/503 | 307,200 | 307,200 | 307,200 | 307,200 | 307,200 | 307,200 | 307,200 | 307,200 | 307,200 | 307,200 |
| 19. | Էլեկտրական լար ԱՊՎ - 1x10 մմ² | 31321280/503 | 282,000 | 282,000 | 282,000 | 282,000 | 282,000 | 282,000 | 282,000 | 282,000 | 282,000 | 282,000 |
| 20. | Էլեկտրական լար ԱՊՎ - 1x16 մմ² | 31321290/503 | 840,000 | 840,000 | 840,000 | 840,000 | 840,000 | 840,000 | 840,000 | 840,000 | 840,000 | 840,000 |
| 21. | էլեկտրական լար՝ պղնձյա, բազմաջիղ, ՊՊՎ, 2x4.0 մմ² | 31331290/503 | 600,000 | 600,000 | 600,000 | 600,000 | 600,000 | 600,000 | 600,000 | 600,000 | 600,000 | 600,000 |
| 22. | էլեկտրական լար՝ պղնձյա, բազմաջիղ, ՊՊՎ, 2x2.5 մմ² | 31331280/503 | 990,000 | 990,000 | 990,000 | 990,000 | 990,000 | 990,000 | 990,000 | 990,000 | 990,000 | 990,000 |
| 23. | Էլեկտրական մալուխ ԱՎՎԳ - 2x6 մմ² | 31331100/503 | 600,000 | 600,000 | 600,000 | 600,000 | 600,000 | 600,000 | 600,000 | 600,000 | 600,000 | 600,000 |
| 24. | Էլեկտրական մալուխ ԱՎՎԳ - 4x6 մմ² | 31331110/503 | 455,400 | 455,400 | 455,400 | 455,400 | 455,400 | 455,400 | 455,400 | 455,400 | 455,400 | 455,400 |
| 25. | Էլեկտրական մալուխ ԱՎՎԳ - 4x10 մմ² | 31331120/503 | 744,000 | 744,000 | 744,000 | 744,000 | 744,000 | 744,000 | 744,000 | 744,000 | 744,000 | 744,000 |
| 26. | մալուխ АВВГ ալյումինե 4x16մմ2 (Էլեկտրական մալուխ ԱՎՎԳ - 4x16 մմ²) | 44322260/503 | 1,080,000 | 1,080,000 | 1,080,000 | 1,080,000 | 1,080,000 | 1,080,000 | 1,080,000 | 1,080,000 | 1,080,000 | 1,080,000 |

* Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:

**Գնորդ**
ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ ՊՆ ՆՏԱ Դեպարտամենտի պետ
Ն. ՅՈՒԼՉՅԱՆ

**Վաճառող**
«ՍԵԴԱՐԱ» ՍՊԸ
տնօրեն
Լ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ